

ՀՐԱՎԵՐ

ԹԻՎ ՅՓ-ԱԶԲ-10/20 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ

Սույն հրավերը տրամադրվում է ի լրումն «Հայփոստ» ՓԲԸ (այսուհետ նաև՝ Պատվիրատու կամ Ընկերություն) կողմից ավտոմեքենաների (այսուհետ նաև՝ ապրանքներ) ձեռքբերման նպատակով թիվ ՅՓ-ԱԶԲ-10/20 ծածկագրով անցկացվող մրցույթի հայտարարության:

Բաժին 1. Գնման ենթակա ապրանքների անվանումը և բնութագրերը

1. Գնման առարկայի տեխնիկական բնութագրերը և այլ հատկանիշները ներկայացված են սույն հրավերին կից հավելված 1-ում:

Բաժին 2. Որակավորման չափանիշները

Մաս N	Որակավորման չափանիշներ	Սահմանված չափանիշները
1	Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը	«ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ»
2	Մասնագիտական փորձառություն	«ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ»
3	Տեխնիկական միջոցներ	«ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ»
4	Ֆինանսական միջոցներ.	«ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ»
5	Աշխատանքային ռեսուրսներ	«ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ»

Բաժին 3. Մասնակցության իրավունքի պահանջները և դրանց գնահատման կարգը

Մաս N	Մասնակցության իրավունքի տեսակը	Լրացման կարգը
1	Սնանկության, անվճարունակության կամ լուծարման գործընթացներում չգտնվելու վերաբերյալ տեղեկատվություն	<ol style="list-style-type: none"> 1. Սույն մասով նախատեսված մասնակցության իրավունքի չափանիշը գնահատվում է հիմք ընդունելով Մասնակցի ներկայացրած հայտարարությունը՝ սնանկության, անվճարունակության կամ լուծարման գործընթացներում չգտնվելու վերաբերյալ, և գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկված չլինելու վերաբերյալ: 2. Մինչև պայմանագրի կնքումը պայմանագրի կնքման առաջարկություն ստացած մասնակիցը պարտավոր է Հանձնաժողովի պահանջով ներկայացնել սույն մասով նախատեսված հայտարարությունը հիմնավորող փաստաթղթերը: Որպես նման փաստաթուղթ, մասնակիցը ներկայացնում է ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից տրված տեղեկանքն առ այն, որ տվյալ մասնակիցը չի գտնվում անվճարունակության, սնանկության կամ լուծարման գործընթացներում:
2	Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկված չլինելու վերաբերյալ տեղեկատվություն	<ol style="list-style-type: none"> 1. Սույն մասով նախատեսված մասնակցության իրավունքի չափանիշը գնահատելիս հիմք ընդունելով Մասնակցի ներկայացրած հայտարարությունը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկված չլինելու վերաբերյալ՝ Գնումները համակարգողը ստուգում է նշված տեղեկությունը www.gnumncr.am կայքում, ինչի վերաբերյալ Հանձնաժողովի՝ «Հաղթողին որոշելու» նիստում հայտարարում է Մասնակցի ներկայացրած տեղեկատվության հավաստիության կամ անհավաստիության վերաբերյալ: 2. Եթե Մասնակիցը ներկայացրել է սույն կետով նախատեսված պահանջի վերաբերյալ ոչ հավաստի տեղեկատվություն, ապա Մասնակիցն անմիջապես հայտարարվում է չորակավորված և վերջինս զրկվում է գնման գործընթացին հետագա մասնակցության իրավունքից:
3	Գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին տեղեկատվություն	<ol style="list-style-type: none"> 1. Մասնակիցն իր հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին: 2. Եթե գնման գործընթացի ընթացքում մինչև պայմանագրի կնքումը պարզվում է, որ Մասնակիցը ներկայացրել է սույն կետով նախատեսված պահանջի վերաբերյալ ոչ հավաստի տեղեկատվություն, ապա Մասնակիցն անմիջապես հայտարարվում է չորակավորված և վերջինս զրկվում է գնման գործընթացին հետագա մասնակցության և պայմանագիր կնքելու իրավունքից:

Բաժին 4. Հայտերի բացման ձևը, վայրը, օրը և ժամը.

1. Հայտերի բացման օրը, վայրը և ժամը սահմանված են Հայտարարությամբ: Համաձայն հրապարակված հայտարարության հայտերը բացվում են «Հայփոստ» ՓԲԸ գլխամասային գրասենյակում, Սարյան 22 հասցեում, **23.10.2020թ-ին ժամը 11:00-ին**: Մասնակիցները Հայտերի բացման նիստին մասնակցելու համար պետք է ներկայանան անձը հաստատող փաստաթղթով և լիազորությունները հավաստող փաստաթղթով: Միանձնյա գործադիր մարմնի (տնօրեն, գլխավոր տնօրեն և այլն) անձամբ մասնակցության դեպքում ներկայացվում է անձնագիր և պետական ռեգիստրի վկայականի համապատասխան ներդիրը, որով հավաստվում է տվյալ անձի միանձնյա գործադիր մարմնի նշանակված լինելու հանգամանքը, իսկ լիազորված անձի դեպքում ներկայացվում է իրավաբանական անձի կողմից պատշաճ կերպով տրված լիազորագիր:
2. Հայտերի բացման նիստում, որը տեղի է ունենում հայտարարությամբ հրապարակված հայտերի ներկայացման վերջնաժամկետին՝ ըստ գրանցման հերթականության Հանձնաժողովի կողմից բացվում են մասնակիցների կողմից ներկայացված ծրարները և հրապարակվում են ներկայացված փաստաթղթերը, որից հետո հայտարարվում է ընդմիջում հանձնաժողովի կողմից որոշված ժամանակահատվածով:

Բաժին 5. Հայտերի ներկայացման պայմանները, ներառյալ ձևը, տեղը, ժամկետը և հայտի լեզուն, հայտերի վավերականության ժամկետը.

1. Մասնակիցները հայտը ներկայացնում են սույն հրավերի 4-րդ բաժնում սահմանված կարգով և ժամկետներում: Հայտերը կարող են ներկայացվել նաև հայտերի բացման նիստի օրը՝ մինչև Հանձնաժողովի նախագահի կողմից հայտերի բացման նիստը բացված հայտարարվելը՝ **ժամը 11.00-ն**:
2. Հայտերը ներկայացվում են հայերեն լեզվով:
3. Հայտերը ներկայացվում են փաստաթղթային ձևով: Փաստաթղթային ձևով հայտը ներկայացվելու դեպքում մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը ստանձվում և կնքվում է (եթե կնքելու պայմանը կիրառելի է տվյալ մասնակցի համար) մասնակցի կողմից:
4. Ծրարում ներառված փաստաթղթերը կազմվում են բնօրինակից և երկու պատճենից:
5. Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են "բնօրինակ" և "պատճեն" բառերը:
6. Ծրարը և Հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող մասնակցի ղեկավարը կամ վերջինիս կողմից լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ):
7. Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս՝ լիազորությունը հավաստող փաստաթուղթը (լիազորագիրը):
8. Ծրարի վրա հայերեն լեզվով նշվում են՝
 - ա) պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն),
 - բ) մրցույթի ընթացակարգի ծածկագիրը,
 - գ) "չբացել մինչև հայտերի բացման նիստը" բառերը,
 - դ) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը, հասցեն և էլեկտրոնային փոստի հասցեն (եթե

մասնակիցն ունի էլեկտրոնային փոստի հասցե):

9. Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը: Մասնակցի պահանջով այդ մասին վերջինիս տրվում է տեղեկանք:
10. Հայտերը վավերական են մինչև պայմանագրի կնքումը:

Բաժին 6. Եթե գնումն իրականացվում է չափաբաժիններով և մասնակիցներին թույլատրվում է հայտեր ներկայացնել գնվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների միայն մի մասի համար, ապա դրա պայմանները և կարգը.

Սույն հրավերի 1-ին բաժնում ներկայացված միատեսակ ապրանքների յուրաքանչյուր տեսակը (յուրաքանչյուր տողում ներկայացված ապրանքը) հանդիսանում է առանձին չափանաբաժին և մասնակիցները կարող են հայտ ներկայացնել և միաժամանակյա բանակցություններին մասնակցել միայն իրենց նախընտրած ապրանքների/չափաբաժինների մասով:

Բաժին 7. Հայտով ներկայացվող գնի հաշվարկման կարգը: Նշում այն մասին, որ առաջարկվող գինը ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի և այլ վճարումների գծով մասնակցի կողմից կատարված ծախսերը:

1. Առաջարկվող գինը ապրանքների արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի և այլ վճարումների գծով մասնակցի կողմից կատարված ծախսերը:
2. Մասնակիցը ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի գնի հաշվարկ, որում առանձին տողով նշվում է ավելացված արժեքի հարկը: Մասնակցի կողմից ներկայացված գինը չի կարող պակաս լինել ապրանքի ինքնարժեքից, որի հաշվարկը ներկայացվում է հայտով:
3. Եթե միաժամանակ բանակցությունների արդյունքում Մասնակիցը ներկայացնում է նոր գնային առաջարկ, որն ավելի ցածր է քան սկզբնական գնային առաջարկով ներկայացված ինքնարժեքի հաշվարկը, ապա Մասնակիցը՝ հաղթող ճանաչվելու դեպքում մինչև պայմանագրի կնքումը ներկայացնում է նոր գնային առաջարկի հաշվարկը, որով հավաստվում է Մասնակցի կողմից ներկայացված նոր գնի՝ ինքնարժեքից ցածր չլինելու հանգամանք: Եթե Մասնակիցն իր կողմից միաժամանակյա բանակցությունների ընթացքում ներկայացված նոր գինը չի կարողանում հավաստել և ներկայացված գնի ինքնարժեքի նոր հաշվարկը Հանձնաժողովի կողմից ուսումնասիրության արդյունքում գնահատվում է անարժանահավատ, ապա հանձնաժողովը նշված մասնակցին համարում է չորակավորված, ինչի արդյունքում կիրառվում են սույն Հրավերով սահմանված ընթացակարգերը: Մասնակցի կողմից ներկայացված նոր գնի հաշվարկը Հանձնաժողովի կողմից գնահատվում է անարժանահավատ, եթե մասնակիցը նոր գնի հիմնավորման համար ինքնարժեքի տարրերից կատարել է այնպիսի նվազեցումներ, որոնք չեն հիմնավորվում Մասնակցի կողմից ներկայացրած այլ փաստաթղթերով կամ տեղեկություններով:

Բաժին 8. Հայտի և պայմանագրի կատարման ապահովմանը վերաբերող պահանջները.

1. Մասնակիցը հաղթող ճանաչվելու դեպքում պետք է ապահովի սույն հրավերի 1-ին բաժնով նախատեսված ապրանքների մատակարարումը նույն բաժնով նախատեսված գնման ժամանակացույցին համապատասխան: Մասնակիցը սույն պահանջի ապահովման նպատակով ներկայացնում է հայտարարություն առ այն, որ հաղթող ճանաչվելու դեպքում կապահովի սույն հրավերով սահմանված պայմանագրի ապահովման միջոցները:
2. Հաղթող ճանաչված մասնակիցը մինչև պայմանագրի կնքումը ներկայացնում է կնքվելիք պայմանագրի ընդհանուր գնի 5 տոկոսի չափով կանխիկ դրամի ապահովում՝ դրամը մուտքագրելով կամ փոխանցելով «Հայփոստ» ՓԲԸ համապատասխան բանկային հաշվին, կամ ներկայացնում է նույն չափով (պայմանագրի ընդհանուր գնի 5 տոկոսի չափով) տուժանքի համաձայնագիր:

Բաժին 9. Հայտը մերժելու հիմքերը.

Մասնակցի ներկայացրած հայտը մերժվում է, եթե այն օբյեկտիվ որևէ չափանիշով չի համապատասխանում Հրավերի պահանջներին, մասնակցի կողմից չեն ներկայացվել սույն հրավերով սահմանված անհրաժեշտ փաստաթղթերն ու տեղեկությունները կամ մասնակցի ներկայացրած հայտն այլ կերպով չի համապատասխանում սույն հրավերի պահանջներին:

Բաժին 10. Հայտերի գնահատման և հաղթողի ընտրության կարգը

1. Ծրարների բացման և դրանցում առկա փաստաթղթերի հրապարակումից հետո հանձնաժողովը հայտարարում է ընդմիջում՝ ներկայացված փաստաթղթերն ուսումնասիրելու նպատակով: Ընդմիջման ժամկետը՝ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման գործընթացի ժամանակատարությունից կախված հանձնաժողովի կողմից կարող է սահմանվել մինչև 5 աշխատանքային օր:
2. Ընդմիջում հայտարարելիս մասնակիցները հանձնաժողովի կողմից տեղեկացվում են, որ հրավերով սահմանված կարգով հանձնաժողովի հաջորդ նիստի ընթացքում ոչ գնային չափանիշներին բավարարած մասնակիցների միջև անցկացվելու են միաժամանակյա բանակցություններ:
3. Ընդմիջումը հայտարարվելուց հետո հանձնաժողովի անդամները ուսումնասիրում են ներկայացված փաստաթղթերը և գնահատում են ոչ գնային առաջարկները: Ոչ գնային առաջարկները (որկավորման չափանիշները, մասնակցության իրավունքը, տեխնիկական բնութագրերը և այլն) գնահատելիս հանձնաժողովը կայացնում է որոշում նշված ոչ գնային առաջարկները հրավերի պայմաններին բավարարելու կամ չբավարարելու վերաբերյալ: Եթե որևէ մասնակցի ներկայացրած հայտը չի համապատասխանում Հրավերի ոչ գնային չափանիշներին, ապա Հանձնաժողովի արձանագրության մեջ նշվում են չբավարարելու համար հիմք հանդիսացած փաստերը:
4. Հրավերով սահմանված ոչ գնային չափանիշները գնահատվում են հետևյալ կարգով՝

ա) «Գնման ընթացակարգին մասնակցության իրավունք» ոչ գնային չափանիշը գնահատվում է հիմք ընդունելով Մասնակցի ներկայացրած հայտարարությունը՝ սնանկության, անվճարունակության կամ լուծարման գործընթացներում չգտնվելու վերաբերյալ, և գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկված չլինելու վերաբերյալ.

բ) «Որակավորման չափանիշներ» ոչ գնային չափանիշի գնահատման դեպքում գնման գործընթացի արձանագրությունում նշվում են այն մասնակիցները, որոնց որակավորման չափանիշները ըստ ներկայացված փաստաթղթերի չեն համապատասխանում հրավերով սահմանված որակավորման չափանիշներին.

Սույն կետի «ա» ենթակետով նախատեսված մասնակցության իրավունքի չափանիշը գնահատելիս հիմք ընդունելով Մասնակցի՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկված չլինելու վերաբերյալ հայտարարությունը՝ Գնումները համակարգողը ստուգում է նշված տեղեկությունը www.gnumner.am կայքում, ինչի վերաբերյալ Հանձնաժողովի՝ «Հաղթողին որոշելու» նիստում հայտարարություն է կատարվում Մասնակցի ներկայացրած տեղեկատվության հավաստիության կամ ոչ հավաստիության վերաբերյալ: Եթե Մասնակիցը ներկայացրել է սույն կետով նախատեսված պահանջի վերաբերյալ ոչ հավաստի տեղեկատվություն, ապա Մասնակիցն անմիջապես հայտարարվում է չորակավորված և վերջինս գրկվում է գնման գործընթացին հետագա մասնակցության իրավունքից:

5. Հանձնաժողովի՝ հայտերի բացման նիստից հետո հրավիրվող նիստը մրցույթի հաղթողին որոշելու նիստն է: Նշված նիստը իրավագոր է, եթե նիստին մասնակցում են Հանձնաժողովի անդամների երկու երրորդը:
6. Հանձնաժողովի նախագահը (նրան փոխարինող անձը) հայտարարում է հայտերի գնահատման արդյունքները և նիստին ներկա մասնակիցներին հայտնում է, թե որ մասնակցի ներկայացրած ոչ գնային առաջարկները չեն համապատասխանում հրավերի պահանջներին, որի արդյունքում նշված մասնակիցը համարվում է չորակավորված:
7. Հանձնաժողովն իրավունք ունի մասնակցից պարզաբանում պահանջել ներկայացված հայտում առկա դրույթների անճշտությունների վերաբերյալ: Նշված դեպքում, եթե մասնակցի ներկայացրած բացատրությունը հնարավորություն է ընձեռում պարզաբանում մտցնել հայտում առկա դրույթի վերաբերյալ, ապա Հանձնաժողովը հիմք ընդունելով նշված պարզաբանումը մասնակցին համարում է որակավորված: Հակառակ դեպքում արձանագրվում է, որ մասնակցի ներկայացրած հայտում առկա ոչ գնային առաջարկները չեն համապատասխանում հրավերի պահանջներին:
8. Եթե մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են անհամապատասխանություններ տառերով և թվերով գրված տվյալների միջև, ապա Հանձնաժողովի կողմից հիմք է ընդունվում տառերով գրվածը:
9. Հանձնաժողովի նախագահը (նրան փոխարինող անձը) ոչ գնային պահանջներին համապատասխանող բոլոր մասնակիցներին (հանձնաժողովի նիստին ներկա մասնակիցներին) կրկին պարզաբանում է միաժամանակյա բանակցությունների անցկացման ընթացակարգը և Հանձնաժողովի քարտուղարին առաջարկում է մասնակիցներին տրամադրել բանակցությունների թերթիկները:
10. Հանձնաժողովի նախագահը ֆիքսում է բանակցությունների ժամանակը, որը սահմանվում 30 րոպեից մինչև մեկ ժամ՝ կախված գնային առաջարկների ներկայացման ժամանակատարությունից: Բանակցությունների ժամանակատևածը ֆիքսելուց Հանձնաժողովը կարող է հաշվի առնել նաև մրցույթի մասնակիցների առաջարկները:
11. Բանակցությունների անցկացման ժամանակահատվածը ֆիքսելուց հետո մասնակիցները բանակցությունների թերթիկում (թերթիկի ձևաթուղթը կցված է սույն հավելվածին) լրացնում են իրենց կողմից առաջարկվող նոր գինը (եթե այդպիսին առաջարկվում է մասնակցի կողմից):
12. Հանձնաժողովի նախագահը մասնակիցների կողմից լրացված բանակցությունների թերթիկները միաժամանակ հավաքում է մասնակիցներից, որից հետո հանձնաժողովի նախագահը կամ հանձնաժողովի այլ անդամը հայտարարում են մասնակիցների անունները (անվանումները) ու նրանց կողմից առաջարկվող նոր գները:
13. Մասնակիցների կողմից առաջարկված նոր գները հայտարարելուց հետո Հանձնաժողովի նախագահը բանակցությունների թերթիկները կրկին միաժամանակ բաժանում է մասնակիցներին՝ առաջարկելով կրկին ներկայացնել նոր գնային առաջարկ:

14. Վերը նշված միաժամանակյա բանակցությունների գործընթացը շարունակվում է մինչև սահմանված բանակցությունների ժամանակահատվածի ավարտը:
15. Բանակցությունների ժամանակահատվածի ավարտից հետո Հանձնաժողովի նախագահը միաժամանակ հավաքում է բանակցությունների թերթիկները, հայտարարում է վերջնական գները, որից հետո հայտարարում է ընդմիջում մրցույթի հաղթողին հայտարարելու նպատակով: Ընդմիջման ավարտին Հանձնաժողովի նախագահը հայտարարում է միցույթի հաղթողին և պարզաբանում, որ նիստի արձանագրությունը մասնակիցները կարող են ստանալ Հանձնաժողովի քարտուղարից:
16. Եթե Մրցույթի արդյունքներով լավագույն գնային առաջարկը ներկայացրած մասնակցի գնային առաջարկները, այդուհանդերձ, ավելի բարձր են քան նախապես նախատեսվել էր ընկերության կողմից, կամ, եթե Ընկերության կողմից նախապես կատարված ուսումնասիրությունների համաձայն մրցույթի արդյունքում առաջարկվող գները բարձր են շուկայում առկա գներից (առկա է հնարավորություն գնման առարկան ձեռք բերել ավելի էժան գներով), ապա գնահատող հանձնաժողովը կարող է առաջարկել մրցույթի արդյունքներով լավագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին փոփոխել իր կողմից ներկայացրած վերջնական գինը և պայմանագիրը կնքել շուկայում առկա խելամիտ գնով (Ընկերության ուսումնասիրության արդյունքում խելամիտ, ընդունելի և առկա գինով): Եթե մրցույթի արդյունքներով լավագույն առաջարկ ներկայացրած մասնակիցը չի համաձայնվում Հանձնաժողովի առաջարկին, ապա Հանձնաժողովի պատճառաբանված առաջարկության հիման վրա Ընկերության ղեկավարը մրցույթը հայտարարում է չեղյալ:
17. Մրցույթի հաղթողին հայտարարելու վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը տրամադրվում է մրցույթի բոլոր մասնակիցներին՝ վերջիններիս պահանջով: Մրցույթի հաղթողին հայտարարելու վերաբերյալ ընդմիջման ժամկետը չի կարող գերազանցել 2 աշխատանքային օրը, որը սահմանվում է Հանձնաժողովի վերջնական (մրցույթի հաղթողին հայտարարելու) արձանագրությունը կազմելու համար:
18. Մրցույթի հաղթողին հայտարարելու վերաբերյալ Հանձնաժողովի արձանագրությամբ սահմանվում են նաև մրցույթում 2-րդ և հաջորդաբար այլ տեղերը զբաղեցրած մասնակիցները:

Բաժին 11. Գնման գործընթացի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու կարգը, տեղեկություններ մասնակիցների հետ կազմակերպվելիք հանդիպումների մասին, ինչպես նաև գնահատող հանձնաժողովի քարտուղարի անունը և ազգանունը.

- Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ պահանջելու հրավերի պարզաբանում:
2. Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում:
 3. Հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը հրապարակվում է տեղեկագրում՝ հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրելու օրվան հաջորդող օրը, առանց նշելու հարցումը կատարած մասնակցի տվյալները:
 4. Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն հոդվածով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև,

եթե հարցունը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից.

5. Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ:
6. Փոփոխություն կատարելու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում փոփոխություն կատարելու և դրանք տրամադրելու պայմանների մասին հայտարարություն է հրապարակվում տեղեկագրում:
7. Փոփոխություններ կատարվելու դեպքում հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը հաշվվում է այդ փոփոխությունների մասին տեղեկագրում հայտարարության հրապարակման օրվանից: Փոփոխությունների կատարման դեպքում, եթե տվյալ գնման գործընթախի համար սահմանվել է հայտերի ապահովման պահանջ, ապա մասնակիցները պարտավոր են երկարաձգել իրենց ներկայացրած հայտի ապահովման գործողության ժամկետը կամ ներկայացնել հայտի նոր ապահովում:
8. Պարզաբանում և հրավերում փոփոխություններ կատարելու գործողությունների արդյունքների մասին կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը:
9. Գնահատող Հանձնաժողովի քարտուղարն է Նելլի Իսախանյանը:

Բաժին 12. Օրենքի և իրավական այլ ակտերի դրույթներին կատարված հղումները.

1. Սույն հրավերը կազմվել է և գնման գործընթացն իրականացվում է «Հայփոստ» փակ բաժնետիրական Գնումների գործընթացի կազմակերպման կարգով սահմանված կանոններով և ընթացակարգերով:
2. «Հայփոստ» ՓԲԸ-ն հանդիսանալով հանրային ծառայություններ մատուցող ընկերություն իր կարիքների համար գնումներն իրականացնում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ, 50-րդ և 51-րդ հոդվածներով սահմանված նորմերին համապատասխան՝ ընկերության Գլխավոր գործադիր տնօրենի 20.05.2011թ-ի թիվ 270-Լ հրամանով հաստատված Գնումների գործընթացի կազմակերպման կարգով:
3. Գնումների գործընթացի վերաբերյալ բողոքների քննարկումն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ բաժնով սահմանված կարգով:

Բաժին 13. Պայմանագիր կնքելու առաջարկը ներկայացնելու պայմանները և պայմանագիր կնքելու կարգը.

1. Մրցույթի հաղթողի հետ Բանակցությունների ավարտից հետո մինչև 5 աշխատանքային օրվա ընթացքում Ընկերությունը կնքում է պայմանագիր: Պայմանագիր կնքելու նպատակով Հաղթող ճանաչված մասնակցին Ընկերությունը ներկայացնում է առաջարկություն սույն կետով սահմանված ժամկետի ավարտից առնվազն 3 աշխատանքային օր առաջ:
2. Եթե մասնակիցներն իրենց որակավորման չափանիշների և մասնակցության իրավունքի հավաստման վերաբերյալ հայտով ներկայացրել են հայտարարություններ, ապա Հանձնաժողովը հաղթող ճանաչված մասնակցից կարող է պահանջել նշված

հայտարարությունները հիմնավորող սույն հրավերով սահմանված փաստաթղթերը, որոնց ուսումնասիրության արդյունքում որոշում է կայացվում մասնակցի որակավորման և այլ չափանիշների համապատասխանության կամ անհամապատասխանության վերաբերյալ և իրկանացվում են Գնումների կարգով ու սույն հրավերով սահմանված գործընթացները:

3. Եթե մրցույթի հաղթողը ցանկացած պատճառով հրաժարվում է պայմանագիր կնքելուց, ապա պայմանագիրը կարող է կնքվել 2-րդ, իսկ վերջինիս հրաժարվելու դեպքում հաջորդաբար այլ տեղերը զբաղեցրած մասնակիցների հետ: 2-րդ և հաջորդաբար այլ տեղերը զբաղեցրած մասնակիցների հետ պայմանագիր կնքվում է, եթե նշված մասնակիցների կողմից առաջարկված գները ընդունելի են Ընկերության համար: Առաջարկված գների ընդունելի լինելու հանգամանքը որոշվում է Ընկերության ղեկավարի կողմից:
4. Պայմանագիրը կնքելուց հետո, դրա գործողության ընթացքում, եթե Ընկերությունը շուկայում կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզում է, որ շուկայում առկա են այլ մատակարարների կողմից առաջարկվող նույն ապրանքների համար առաջարկվող ավելի էժան գներ, ապա Ընկերությունը մատակարարին առաջարկում է համապատասխան չափով իջեցնել ապրանքների գները: Եթե մատակարարը համաձայնվում է համապատասխան չափով իջեցնել նշված գները, ապա պայմանագրում կատարվում են համապատասխան փոփոխություններ: Հակառակ դեպքում, եթե մատակարարը չի համաձայնվում գների իջեցման վերաբերյալ Ընկերության առաջարկին, ապա Ընկերությունն իրավունք է ստանում միակողմանիորեն լուծել պայմանագիրը՝ պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում: Ընկերության կողմից պայմանագրի լուծման վերաբերյալ որոշումը կայացնելիս գնահատվում են պայմանագրի լուծման արդյունքում ապրանքների չմատակարարման հետ կապված ռիսկերը: Սույն կետով նշված պայմանը հանդիսանում է հրավերի անբաժանելի մաս:
5. Եթե հաղթող ճանաչված մասնակցի հետ կնքվում է պայմանագիր և մասնակիցը պայմանագրի շրջանակներում մատակարարում է ապրանք, որը որևէ չափանիշով չի համապատասխանում գնման գործընթացի ընթացքում ներկայացված նմուշին, ապա Ընկերությունն իրավունք ունի լուծել պայմանագրը և պահանջել վնասների հատուցում:
6. Եթե հաղթող ճանաչված մասնակցի հետ կնքվում է պայմանագիր և պայմանագրի գործողության ընթացքում պարզվում է, որ գնման գործընթացի ընթացքում մինչև պայմանագրի կնքումը Մասնակիցն իր հայտարարությամբ ներկայացրել է գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության վերաբերյալ ոչ հավաստի տեղեկատվություն, ապա Ընկերությունն իրավունք ունի լուծել պայմանագրը և պահանջել վնասների հատուցում:

Բաժին 14. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հրապարակման տարբերակը.

1. Եթե պայմանագրի գինը գերազանցում է գնումների բազային միավորը, ապա Ընկերությունը՝ տեղեկագրում հրապարակելու նպատակով, պայմանագիրը կնքելու օրվանից հետո 7 օրացուցային օրվա ընթացքում, լիազորված մարմին է ներկայացնում այդ մասին հայտարարություն, բացառությամբ պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք պարունակող գնումների:
2. Կնքված պայմանագրի մասին հայտարարությունը պարունակում է հետևյալ տեղեկությունները՝
 - 1) գնման առարկայի համառոտ նկարագրությունը.
 - 2) պատվիրատուի անվանումը եւ հասցեն.
 - 3) պայմանագրի կնքման ամսաթիվը.
 - 4) ընտրված մասնակցի (մասնակիցների) անվանումը եւ հասցեն.
 - 5) մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները և պայմանագրի գինը.
 - 6) մասնակիցների ներգրավման նպատակով իրականացված հրապարակումների մասին տեղեկությունները (եթե կիրառելի են).
 - 7) կիրառված գնման ընթացակարգը և դրա ընտրության հիմնավորումը:

Բաժին 15. Գնման գործընթացի հետ կապված գործողությունները (անգործությունը) և (կամ) ընդունված որոշումները բողոքարկելու մասնակցի իրավունքը և կարգը.

Գնումների գործընթացի վերաբերյալ բողոքների քննարկումն իրականացվում է օրենքով սահմանված կարգով:

Բաժին 16. Հայտի նախապատրաստման, ներկայացման, բացման և գնահատման, ինչպես նաև գնումների վերաբերյալ անհրաժեշտ այլ տեղեկատվություն:

Սույն հրավերով նշված տեղեկություններից և փաստաթղթերից բացի այլ տեղեկատվություն ներկայացնելու պայմանը «ԿԻՐԱՌ-ԵԼԻ ՉԷ» :

Բաժին 17. Հայտերի պատրաստման հրահանգները.

ՀՐԱՀԱՆԳ

Մրցույթի հայտերի պատրաստման

1. Սույն հրահանգը նպատակ ունի օժանդակել Մասնակիցներին մրցույթի հայտը պատրաստելիս:
2. Նպատակահարմարության դեպքում Մասնակիցը պահանջվող տեղեկությունները կարող է ներկայացնել սույն հրահանգով առաջարկվող ձևերից տարբերվող՝ այլ ձևերով՝ պահպանելով պահանջվող վավերապայմանները:
3. Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է Պատվիրատուին ներկայացնել մրցույթի հայտ: Մրցույթի հայտը սույն հրավերով նախատեսված կարգով մրցույթին մասնակցելու ցանկություն ունեցող անձի կողմից նախապատրաստված և Պատվիրատուին ներկայացված առաջարկն է (**Ձև N 1**), որին կցվում են Հրավերով և սույն հրահանգով պահանջվող փաստաթղթերը:
4. Մրցույթի հայտը (ներառվող բոլոր փաստաթղթերը) պետք է կազմված լինի հայերեն լեզվով:
5. Մասնակիցը որակավորման իր չափանիշները հավաստելու համար Ձև 1-ով նախատեսված առաջարկին կից ներկայացնում է Հրավերի **2-րդ բաժնով** սահմանված որակավորման չափանիշների վերաբերյալ համապատասխան փաստաթղթերը և տեղեկությունները՝ սույն հրահանգին կից **Ձև 2-ով** սահմանված ձևաչափով:
6. Մասնակիցն իր մասնակցության իրավունքը հավաստելու համար Ձև 1-ով նախատեսված առաջարկին կից ներկայացնում է Հրավերի **3-րդ բաժնով** սահմանված մասնակցության իրավունքի չափանիշների վերաբերյալ փաստաթղթերը և տեղեկությունները՝ սույն հրահանգին կից **Ձև 3-ով** սահմանված ձևաչափով:
7. Մասնակիցը Ձև 1-ով նախատեսված առաջարկին կից ներկայացնում է պայմանագրի ապահովման միջոցներ՝ համաձայն հրավերի 8-րդ բաժնով սահմանված պայմանների: Հայտի և պայմանագրի ապահովման միջոցները ներկայացվում են սույն հրահանգի **Ձև 4-ով** սահմանված ձևաչափով:

8. Մասնակիցը ներկայացնում է գնային առաջարկ **սույն հրահանգի Ձև 5-ով** սահմանված ձևաչափով, որը ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի ներառում է նաև տուրքերի, հարկերի և այլ վճարումների գծով ծախսերը, ինչպես նաև փոխադրման, ապահովագրման և այլ վերագրելի ծախսերը (եթե այդպիսիք առկա են): Մասնակիցը գնային առաջարկին կից ներկայացնում է ինքնարժեքի հաշվարկ:
9. Մասնակիցը մրցույթի հայտը ներկայացնում է սույն Հրավերով սահմանված կարգով:
10. Մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը ստանձվում և կնքվում է այն ներկայացնողի կողմից: Ծրարում ներառված փաստաթղթերը կազմվում են բնօրինակից, ինչպես նաև Հրավերով սահմանված լինելու դեպքում նաև համապատասխան թվով պատճեններից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը: Ծրարը և հրավերով նախատեսված՝ մասնակցի կողմից կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս կողմից լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե մրցույթի հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:
11. Սույն հրահանգի **10-րդ** կետում նշված ծրարի վրա մրցույթի հայտը կազմելու լեզվով նշվում են՝
 - ա) պատվիրատուի անվանումը և մրցույթի հայտի ներկայացման վայրը (հասցեն).
 - բ) մրցույթի ծածկագիրը.
 - գ) «չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը.
 - դ) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը:4.3 Սույն հրահանգի 10-րդ և 11-րդ կետերի պահանջներին չհամապատասխանող հայտերը մերժվում են և առանց բացվելու վերադարձվում ներկայացնողին:

Բաժին 18 Պայմանագրի նախագիծը.

Ձև 1

ՀՓ-ԱԶԲ-10/20 ծածկագրով
մրցույթի հրավերի

Մրցույթի նասնակցելու առաջարկ

_____ հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու

Մրցույթի մասնակցի անվանումը (անունը)

«Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության կողմից ՀՓ-ԱԶԲ-10/20 ծածկագրով հայտարարված մրցույթին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է մրցույթի հայտը:

_____ հայտնում է նաև, որ ունի

Մրցույթի մասնակցի անվանումը (անունը)

զման պայմանագրով և հրավերով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, մասնագիտական հատկանիշներ, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ.

Առդիր՝ _____ թերթ:

_____ (Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

_____ (ստորագրությունը)

Կ. Տ.

_____ 2020թ.

(ամսաթիվը, ամիսը)

Որակավորման չափանիշներ

Մաս N	Որակավորման չափանիշներ	Մասնակցի կողմից ներկայացվող տեղեկություններն ու փաստաթղթերի անվանումները
1	Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը	«ԿԻՐԱՌ-ԵԼԻ ՉԷ»
2	Մասնագիտական փորձառություն	«ԿԻՐԱՌ-ԵԼԻ ՉԷ»
3	Տեխնիկական միջոցներ	«ԿԻՐԱՌ-ԵԼԻ ՉԷ»
4	Ֆինանսական միջոցներ.	«ԿԻՐԱՌ-ԵԼԻ ՉԷ»
5	Աշխատանքային ռեսուրսներ	«ԿԻՐԱՌ-ԵԼԻ ՉԷ»

Առդիր՝ _____ թերթ:

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

_____ 2020թ.

(ամսաթիվը, ամիսը)

Մասնակցության իրավունք

Մաս N	Մասնակցության իրավունքի տեսակը	Մասնակցի կողմից ներկայացվող տեղեկություններն ու փաստաթղթերի անվանումները
1	Սնանկության, անվճարունակության կամ լուծարման գործընթացներում չգտնվելու վերաբերյալ տեղեկատվություն	Մասնակիցը ներկայացնում է Հրավերի 3-րդ բաժնի 2-րդ մասով նախատեսված հայտարարությունը, ինչպես նաև ներկայացնում է պետական գրանցման վկայականի (ներառյալ՝ բոլոր ներդիրների) կամ օտարերկրյա անձի դեպքում՝ համապատասխան այլ փաստաթղթի պատճենի իր կողմից վավերացված օրինակը:
2	Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկված չլինելու վերաբերյալ տեղեկատվություն	Մասնակիցը ներկայացնում է Հրավերի 3-րդ բաժնի 2-րդ մասով նախատեսված հայտարարությունը, ինչպես նաև անհրաժեշտ տեղեկությունները (եթե այդպիսիք պահանջվում են)
3	Գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին տեղեկատվություն	Մասնակիցը ներկայացնում է Հրավերի 3-րդ բաժնի 3-րդ մասով նախատեսված հայտարարությունը, ինչպես նաև անհրաժեշտ տեղեկությունները (եթե այդպիսիք պահանջվում են)

Առդիր՝ _____ քերթ:

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

_____ 2020թ.

(ամսաթիվը, ամիսը)

Հայտի և/կամ պայմանագրի ապահովման միջոցներ

1. Հաղթող ճանաչված Մասնակիցը սույն Ձևի պահանջները ապահովելու նպատակով մինչև պայմանագրի կնքումը ներկայացնում է «Հայփոստ» ՓԲԸ համապատասխան բանկային հաշվին պայմանագրի ապահովման միջոցները փոխանցելու կամ կանխիկ մուտքագրելու վերաբերյալ համապատասխան փաստաթուղթը (վճարման հանձնարարական, դրամարկղի մուտքի օրդեր և այլն), ինչպես նաև Հրահանգի սույն մասում լրացնում է ներկայացվող փաստաթղթի վավերապայմանները:
2. Հաղթող ճանաչված Մասնակիցը սույն Ձևի պահանջները ապահովելու նպատակով մինչև պայմանագրի կնքումը դրամական ապահովման փոխարեն կարող է ներկայացնել տուժանքի համաձայնագիր:

Առդիր՝ _____ քերթ:

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

_____ 2020թ.

(ամսաթիվը, ամիսը)

Գնային առաջարկ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված ՀՓ-ԱԶԲ-10/20 ծածկագրով մրցույթի հրավերը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, _____-ն
 Մրցույթի մասնակցի անվանումը (անունը)
 առաջարկում է ներկայացված ապրանքների մասով պայմանագիրը կատարել համաձայն կից ներկայացված գնացուցակի:

Կից ներկայացնում ենք առաջարկվող գնի հաշվարկը հետևյալ ձևաչափով:

Առդիր՝ _____ թերթ:

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

_____ 2020թ.

(ամսաթիվը, ամիսը)